Լեոնիդ Ենգիբարյան

Մի՛ նեղացրեք մարդուն

Իզուր, հենց էնպես մարդուն նեղացնել պետք չի, որովհետեւ դա շատ վտանգավոր է: Հանկարծ ու նա Մոցա՞րտն է: Ու հատկապես, եթե դեռ ոչինչ չի հասցրել գրել, անգամ «Թուրքական մարշը»: Կնեղացնեք նրան ու ոչինչ էլ չի գրի: Մի բան չի գրի, հետո մյուսը, ու աշխարհում կպակասի գեղեցիկ երաժշտությունը, կպակասեն լուսավոր զգացմունքներն ու մտքերը, ու նշանակում է, լավ մարդիկ էլ կպակասեն:

Իհարկե, մեկ ուրիշին կարելի եւ նեղացել՝ ամեն մեկը հո Մոցարտ չի՞: Բայց, այնուամենայնիվ, պետք չի, հանկարծ ու . . .

Մի՛ նեղացրեք մարդուն, պետք չի . . .

Դուք էլ այնպիսին եք, ինչպիսին նա է:

Լա՛վ նայեք իրար, մարդի՛կ